

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ ՊԱՏՐԻԱՐՔ Ս. ՀՕՐ ԾՆՆԴԵԱՆ ՊԱՏԳԱՄԸ ԲԵԹՂԵՀԷՄԻ ՍՈՒՐԲ ԱՅՐԷՆ

«Ձի մանուկ ծնա մեզ... եւ անուն կոչեցաւ նմա՝ Հրեշտակ մեծի խորհրդոյ, Սքանչելի, Խորհրդակից, Աստուած հօր, Իշխան խաղաղութեան եւ խաղաղութեան նմա չիք սահման...»:

(Եսայ Թ. 6-7)

Բեթղեհէմի Ծննդեան Ս. Այրէն, հո՛ն ուր ծնաւ եւ յայտնեցաւ Սիրոյ եւ Խաղաղութեան Իշխանը, եւ հո՛ն ուր «Անբաւելին երկնի եւ երկրի ի մսուր անբանից բազմեցաւ», Սիրոյ եւ Խաղաղութեան ողջոյն ձեզ՝ զաւակներ Հայ Ազգին:

Երկու հազար տարիներ առաջ Հռոմի կայսր՝ Օգոստոս, հրաման կ'արձակէր կազմակերպելու մարդահամար մը իր կայսրութեան ամբողջ տարածքին, որուն յետին նըպատակն էր նիւթապէս եւ քաղաքականապէս զօրացնել իր կայսրութիւնը: Նոյն այդ օրերուն, Հռոմի անծայրածիր կայսրութեան մէջ կը յայտնուէր ուրիշ թագաւոր մը, Մանուկ մը, որ կը ծնէր պարզ ու անյայտ մսուրի մը մէջ, որուն Ծնունդը հրեշտակներ պիտի աւետէին, ըսելով. «Ահա՛ ձեզի եւ ձեր ժողովուրդին բացառիկ ուրախ լուր մը, ահա այսօր ձեր Օծեալ Փրկիչը ծնաւ Դաւիթի քաղաքին մէջ, հոն գացէ՛ք եւ զինք պիտի գտնէք մսուրի մը մէջ»: Եւ Ղուկասի Աւետարանին մէջ նշուած Մսուրը, որուն առաջ դարձեալ կանգնած ենք այս գիշեր, նշան մըն էր տրուած Հայր Աստուծոյ կողմէ ո՛չ միայն հովիւներուն եւ մոգերուն, այլ նաեւ մեզի: Եւ ի՞նչ կ'ըսէ այս Մսուրը այսօրուան աշխարհին, նախ եւ առաջ այս Սուրբ Մսուրը վերջիշեցում մըն է մեզի, որ եթէ մենք իսկապէս կ'ուզենք հասկնալ թէ ո՞վ է Ս. Գրքի Աստուածը, ապա նախ եւ առաջ պարտինք նայիլ եւ ըմբռնել Անոր Միածին Զաւակին խոնարհ Ծնունդը:

Ծննդեան տօնը, սիրելի հայորդիներ, խոնարհութեան եւ համեստութեան տօնն է. ո՛չ միայն մակերեսային համեստութեան, այլ ա՛յն՝ որ մեզի քրիստոնեաներուս կը սորվեցնէ թէ իրա՛ւ խոնարհութիւնը միակ ճամբան է, որուն միջոցաւ Հայր Աստուած ինքզինք կը յայտնէ մեզի: Աստուածորդին ծնաւ համեստ պայմաններու մէջ, ապրեցաւ համեստ եւ նոյնիսկ ենթարկուեցաւ խաշի անարգ մահուան, եւ այս բոլորը՝ մարդկութեան ցոյց տալու Աստուածային մաքուր եւ իրաւ սէրը: Այս գիշեր Բեթղեհէմի մէջ ծնող Մանկան մէջ մենք կը գտնենք Աստուած մը, որուն ծննդեան աւետիսը կը բարձրանար համեստ մսուրէ մը դէպի երկնային գահը: Այս գիշեր ծնող մանուկը թէեւ ունեցաւ համեստ ծնունդ մը, սակայն Ան պիտի գար տակաւ դառնալու Տէրը, Փրկիչն ու Աստուածը մարդոց հոգիներուն: Այդ օրերուն մարդկութիւնը մեծ կարիքը ունէր Փրկիչի մը, եւ Աստուածորդւոյն Ծնունդը Դաւիթ Արքայի քաղաքին մէջ կու գար իրականացնելու այդ: Այս գիշեր ծնող մարդկութեան Փրկիչը թէեւ ինք եւս մարդացաւ, սակայն Ան միաժամանակ Աստուած-Մարդ էր, որ կու գար բուժելու մարդկութիւնը եւ դառնալու աղբիւր սիրոյ եւ բարութեան: Մենք միշտ յիշելու ենք, որ «Փա՛ռք ի բարձունս Աստուծոյ եւ յերկիր խաղաղութիւն», հրեշտակներու երգը պիտի չսուէր երկինքէն, եթէ այս գիշեր Բեթղեհէմ ծնող Մանուկը մարդացած Աստուածը չէր, որ կու գար բուժելու եւ փրկելու մարդկութիւնը:

Մենք համոզուած ենք եւ խորապէս կը հաւատանք երկինք գտնուող Աստուծոյ մը գոյութեան, սակայն որքանով կրնայ երկնաբնակ Աստուած մը գոհացնել երկրաւոր, իր անձնական ճղճիմ հաշիւներէ տարուած մարդ-արարածը, այսպէս ստեղծելով անկամուրջ վիճ մը երկնքի ու երկրի, Հայր Աստուծոյ եւ Մարդուն միջեւ, որ հաւանաբար

մտածէ ըսելով. «Ի՞նչ օգուտ ունի կապոյտ երկնքի մէջ գտնուող Աստուած մը, մինչ մենք կը տառապինք այս երկրի վրայ տարուած զանազան փորձութիւններէ»: Կ'ըսուի թէ, ժամանակին երբ նշանաւոր երաժիշտի մը առաջարկած են յօրինել ուրիշ երկրի մը ազգային քայլերգը, ան կ'երթայ այդ երկիրը ու կ'ապրի այդ մարդոց հետ կիսելով անոնց աղքատութիւնն ու դժուարութիւնները, միով բանիւ դառնալով մէկը իրենցմէ, որմէ ետք միայն կրցած է յայտնել անոնց ապրումներն ու զգացումները: Եւ ճիշդ այդ նոյն բանն էր որ կ'ընէր Աստուած:

Աստուածորդին իր ծնունդով դարձաւ մէկը մեզմէ, եղաւ մեր նման: Ան քալեց եւ խօսեցաւ մարդոց հետ, հասկցաւ անոնց եւ երբ Մարդը սխալ ընթացքի մէջ գտնուէր կու գար զայն ուղղելու եւ անոր սխալները սրբագրելու: Անկասկած, առանց իրեն մեր գոյութիւնը անիմաստ էր եւ անորոշ, հետեւաբար անհրաժեշտ կարիքը կար Աստուծոյ Բանին, Խօսքին գալու աշխարհ եւ Մարդը դնելու ուղիղ ճամբու վրայ: Թերեւս քաղաքակրթութիւնը հին է, ինչպէս աւելի հին է մարդկային ցեղի պատմութիւնը, սակայն մեր Փրկչին ծնունդը կու գար նոր նկարագիր, նոր տարազ մը տալու մարդկային պատմութեան, զայն բաժնելով երկու շրջաններու, Նախքան Քրիստոս եւ Յետ Քրիստոս: Ու այդ օրուրնէ սկսեալ Հայր Աստուած կու գար մտնել մարդկային պատմութեան մէջ, կազմակերպելու խումբը ա՛յն մարդոց՝ որոնք իրենց կեանքերը պիտի պատշաճեցնէին Իր Զաւակին, Սիրոյ Վարդապետին ապրած կեանքի օրինակին, կեանք մը՝ ապրուած Աստուծոյ լոյսին եւ խօսքին մէջ, կեանք մը որ պիտի գար գերազանցելու ինքզինք: Բեթղէհէմէն մինչեւ Գողգոթա Ան մնաց իրա՛ւ մարդ, անցնելով մեր բոլոր դժուարութիւններուն եւ տուայտանքներու բովէն: Աստուծոյ խօսքը, Բանը մարմնացած էր իր մէջ եւ Մարդը Աստուածացած՝ լի շնորհօք եւ ճշմարտութեամբ:

Այս գիշեր ծնող Խաղաղութեան Իշխանին մօտ ինքնագիտակից եւ բնական վեհութիւն մը կայ, որ փոխանակ ուրիշ իշխանաւորներու նման արհամարհելու եւ ծիծաղելու մարդոց խեղճութեան եւ անկարողութեան վրայ, գէշ կը զգայ անոնց համար եւ իր կարգին ցոյց կու տայ անոնց՝ գեղեցիկ ու աստուածարեալ կեանքի ճամբան, հրաւիրելով որ մարդիկ եւս ապրէին իր նման սիրով, արդարութեամբ, սրբութեամբ եւ լի ճշմարտութեամբ: Աշխարհ միայն մէկ անգամ կու գար տեսնել այսպէս բարոյախօս մը, որուն կեանքը համընթաց կ'ընթանար իր ուսուցումներուն եւ սկզբունքներուն, որովհետեւ Հայր Աստուած միշտ կը մնար բեւեռակէտը իր կեանքին: Ան զԱստուած իր Հայրը պիտի կոչէր, սակայն ինքզինք «Որդի մարդոյ», ցոյց տալու եւ միաժամանակ հաստատելու վաւերականութիւնը աշխարհի բոլոր մարդոց հետ իր եղբայրութեան:

Ան եկաւ աշխարհ բուժելու հիւանդները, կերակրելու անօթիները եւ մխիթարելու վշտացեալներն ու տառապեալները, եւ ի՞նչ եղաւ անոր գլխաւոր պատգամը մարդկութեան իր երկրաւոր կեանքի ընթացքին, «Քու մեղքերդ ներուած են» տարբեր ձեւերով: Կինը, որ կու գար իր արցունքներով լուալու եւ մագներով շորցնելու Անոր ոտքերը, ի՞նչ կ'ըսէր Քրիստոս իրեն. «Գնա՛ խաղաղութեամբ եւ այլեւս մի՛ մեղանչեր»: Ի՞նչ կ'ըսէր զինք խաչ հանողներուն. «Հայր, ներէ՛ ասոնց»: Նոյնիսկ իր հետ խաչուող աւագակներէն մէկուն, որ զոջացած էր իր գործած մեղքերուն համար պիտի ըսէր. «Այսօր դուն հետս դրախտ պիտի ըլլաս»:

Այս գիշեր դարձեալ մեր հետ եղէ՛ք ո՛վ հաւատաւոր Հայկեան զարմի զաւակներ, մեր նախնեաց ջերմեռանդ հաւատքովն ու սիրով երկրպագելու մանկացեալ Աստուածորդւոյն, Անոր նուիրելու ձեր սիրտն ու հոգին, ձեր խունկն ու աղօթքը իբր նշան ձեր աննահանջ հաւատարմութեան, որովհետեւ Ազգ սիրելի եւ պատուական, մենք խորա-

պէս կը հաւատանք թէ մենք իբր ժողովուրդ, ինչ որ ունինք որպէս ցեղային արժանիք, ազնիւ ու արժէքաւոր՝ կը պարտինք Անոր՝ որ այս գիշեր մարմնացաւ այստեղ, ծագելու մարդոց հոգիներու եւ բարոյական երկնակամարին վրայ իբր Արեգակ Արդարութեան եւ Սրբութեան: Այդ Մանկացեալ Աստուծոյն լոյսով էր որ մեր հայրենիքը լուսաւորուեցաւ եւ ուխտեց յետ այդու ընթանալ այս Սուրբ Այրէն սկսած նոր կեանքով, որուն իբր հետեւանք քեզի վիճակուած խաչի եւ սարսափի ճամբան եւս քաջաբար վրադ առած քալեցիր Գողգոթայէ-Գողգոթա: Թաղուեցար անյայտ գերեզմաններու մէջ, միշտ խորապէս հաւատալով Անոր Յարութեան, եւ «Զի մանուկ ծնաւ մեզ... եւ անուն կոչեցաւ նմա՝ Հրեշտակ մեծի խորհրդոյ, Սքանչելի, Խորհրդակից, Աստուած հրեզօր, իշխան խաղաղութեան եւ խաղաղութեան նմա չիք սահման...» (Եսայի Թ. 6-7): Դուն եւս արժանացար հրաշալի յարութեան: Հազար փառք Անոր՝ Արդարութեան Արեգակին, որ հաւատքիդ, սիրոյդ եւ յոյսիդ մէջ միշտ վառ պահեց իր հոգիին հուրը եւ սրտէն ի սպառ վանեց մահուան եւ գերեզմանի երկիւղը:

Սիրեցեալ զաւակներ Հայ ազգի, ընդունեցէ՛ք մեր սրտագին ողջոյնը Մարդացեալ Աստուածորդուն այս սրբազան ներշնչարանէն եւ նորոգեցէ՛ք ձեր ուխտը շարունակելու հետեւիլ Անոր քայլերուն եւ այդպէսով միշտ փառաւորելու մեր ազգին հրաշալի վերածնունդը: Ընդունեցէ՛ք այս սրտագին ողջոյնը որ դարերով հնչած է Ս. Երկրէն եւ միշտ արձագանգած մեր նախահայրերու սիրտերուն մէջ, որոնք ամէն տարի ցնծութեամբ կ'ողջունէին իրենց որդեգրութիւնը Երկնաւոր Հօր կողմէ: Այս սուրբ գիշերուան մէջ դարձեալ կը հնչեն զանգերը Ծննդեան Ս. Տաճարին, խոր ու թրթռուն, մեր մտահոգութիւններուն եւ ցաւերուն խառնելով իրենց երկնային մեղեդին, որոնց ձայնը լսելը ամբողջ դարեր եղաւ մեր պապերուն իղձը, երազն ու ձգտումը:

Սիրելի հայորդիներ, Աստուածորդուն Ծննդեան տօնը պէտք է առնել միայն իբր լոկ պատմական իրա՛ւ դէպք մը, այլ ան պարտի իւրաքանչիւր քրիստոնեայի մէջ վերանորոգել այն Լոյսը՝ որ Ծննդեան այդ սուրբ եւ լուռ գիշերուան մէջ լուսաւորեց Բեթղեհէմի երկինքը: Թէեւ երկու հազար տարիներէ ի վեր Քրիստոս կը ծնի Բեթղեհէմի Մսուրին մէջ, բայց այդ ոչ մէկ արժէք պիտի չունենայ եթէ Ան չծնի մեր հոգիներուն մէջ: Սուրբ Ծննդեան տօնը չպատկանիր միմիայն կարծեցեալ քրիստոնեաներու, այլ այն տօնն է ամբողջ աշխարհին, նոյնիսկ ամբողջ բնութեան:

Քսան դարեր անցած են մեր Փրկչի Ծնունդէն ի վեր, եւ մենք Քրիստոնեաներս հարց կու տանք թէ արդեօք իրագործուած է Բեթղեհէմի երկնակամարին վրայ յայտնուած լուսաւոր տեսիլքը, եւ խաղաղութիւնն ու ի մարդիկ հաճութիւնը շօշափելի իրականութիւններ դարձած են, եւ ի վերջոյ Մանուկ-Փրկչին մսուրը կրնա՞յ դարձեալ շինիլ եւ ազնիւ զգացումներու անսպառ աղբիւր դառնալ մեր բոլորին:

Ժողովուրդ Հայոց, որ ի սփիւռս աշխարհի, դուն՝ որ ամբողջ դարեր քու էութեամբդ հաւատացիր մարմնացեալ Աստուծոյ, այս գիշեր դարձեալ միացո՛ւր ձայնդ Սրբոց Յակոբեանց Զինուորեալ Միաբանութեան անդամներուն եւ Սուրբ Երկրէն ներս գտնուող եղբայրներուդ եւ քոյրերուդ ձայնին, աղերսելով Սիրոյ եւ Խաղաղութեան իշխանին, որ փարատէ մէզն ու մառախուղը մեր ժողովուրդին եւ հայրենիքին վրայէն եւ թող միանգամընդմիշտ չքանան չարիքը, լուսահատութիւնն ու տխրութիւնը հեռանան մեր ժողովուրդին սիրտերէն. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս, յաւիտենից. ամէն:

**Ձեզ եւ Մեզ Մեծ Աւետիս,
Քրիստոս Ծնաւ եւ Յայտնեցաւ**